

ԱՐԳԻՇՏԻ II-Ի ՆՈՐԱՀԱՅՏ ՍԵՊԱԳԻՐԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ուրարտական սեպագիրը հայտնաբերվել է 1975 թ. Թանահատ վանքի (IV դար) ավերակներում, Սիսիանի շրջանի Արևիս գյուղից ոչ հեռու: Սեպագիրը փորագրված է եղել բազալտե քարակոթողի երկու երեսներին, սակայն քրիստոնեական դարաշրջանում նրա մի կողմի տեքստը, դժբախտաբար, համարյա ամբողջությամբ տաշվել է՝ իսաչ քանդակելու նպատակով:

Նորահայտ կոթողն իր արտաքին տեսքով (վերին կլոր մասով) համընկնում է Զվարթնոցի, ինչպես նաև ուրարտական այլ հայտնի կոթողներին: Նրա ներքին մասը ջարդված է, սակայն դատելով հակառակ երեսին պահպանված անեծքի բանաձևի սկզբնահատվածից, կարելի է ենթադրել, որ քարակոթողի կոթված բեկորի երկու երեսների վրա եղել է ևս 14 տող տեքստ (7-ական տող՝ յուրաքանչյուր կողմից): Քարակոթողի հակառակ երեսին պահպանված 27 տող սեպագրից և անեծքի բանաձևի 7 տող բացակայող հատվածից երևում է, որ նորահայտ արձանագրությունը կազմված է եղել 68 տողից: Դա համարյա մեկուկես անգամ մեծ է Զվարթնոցի սեպագիր կոթողի միայն մեկ երեսին փորագրված 47 տողանոց տեքստից:

Ելնելով այն փաստից, որ արձանագրությունը պատկանում է Արգիշտի II-ին (տե՛ս հակառակ երես, տող 16), ինչպես նաև քարակոթողի երեսին պահպանված առանձին բառերի (ulgusiani-edini, DḪaldini, aruše, ardiše մնացորդներից, պետք է կարծել, որ նույն թագավորի վաղուց ի վեր հայտնի Հաղիի արձանագրության սկզբնամասի 35 տողանի միօրինակ բանաձևը¹ ընդհանուր առմամբ կարող է տեղ գտած լինի նաև Սիսիանի նորահայտ արձանագրության մեջ:

Արգիշտի II-ի Հաղիի արձանագրության վերոհիշյալ բանաձևի սկզբում, ինչպես հայտնի է, փորագրված է. «Խալդի աստծուն, տիրոջը, այս արձանագրությունը Արգիշտին, Ռուսայի որդին, կանգնեցրեց հանուն կյանքի»: Շարունակության մեջ առկա է մաղթանքի բանաձևը. «Թող լինի Խալդի աստծու կողմից Արգիշտիին, Ռուսայի որդուն, բարօրություն, ekuriše(?), երջանկություն, կյանք, ուրախություն, մեծություն, ինչպես նաև իշխանություն, ուժ (ու) կորով»:

Հաղիի (պետք է ենթադրել նաև Սիսիանի) արձանագրությունը, այնուհետև, Խալդի աստծու անունից Արգիշտիին պարգևում է հզոր թագավորություն, մարտեր և բարօրություն, պատմում թագավորի կոնկրետ ձեռնարկումների մասին: Կարելի է ենթադրել, որ հենց այստեղից էլ սկսվել է նվաճված երկրների հիշա-

¹ Տե՛ս M. de Tseretheli, L'inscription de la stèle de Hagi, RA, 1958, LII, № 1, էջ 29—35; Г. А. Меликшвили, Урартские клинообразные надписи, М., 1960 (այսուհետև՝ УКН), տեքստ 276; F. W. König, Handbuch der chaldischen Inschriften, I—II, Graz, 1955—1957 (այսուհետև՝ Handbuch), տեքստ 124:

տակությունը Սիսիանի արձանագրության մեջ: Այս հատվածի տեքստը ևս, հետագայում խաչ քանդակելու կապակցությամբ, տաշվել է քարակոթողի վրայից և վերջին տողում սոսկ պահպանվել է ... > UDME-ni as-< որի տակ ենթադրվում է I (տարբերակ՝ su-si-ni) UDME-ni áš-gu-bi («մեկ օրում բռնագրավեցի») տեքստը: Ը դեպ, այսպիսի արտահայտության առկայության դեպքում ուրարտական արձանագրությունները սովորաբար պատմում են մեկ օրվա ընթացքում նվաճված երկրների, բնակատեղիների և ամրոցների մասին, ըստ որում այդ ամրոցները, որպես կանոն, ուրարտացիների կողմից կործանվում են, բնակատեղիները՝ հրկիզվում, իսկ երկրներն ավերվում: Նվաճված երկրներից գերի վերցված տղամարդիկ և կանայք սովորաբար քշվում են Բիայնիլի:

Սիսիանի քարակոթողի երեսի վերջնամասում ըստ երևույթին արձանագրվել է էթիուխիի նվաճման փաստը (դրա մանրամասնությունները, ինչպես կտեսնենք ներքևում, առկա են քարակոթողի հակառակ երեսի վրա): Այնուհետև այստեղ հավանաբար բացակայում է էթիունյան որոշ ամրոցների և բնակատեղիների մեկօրյա նվաճման նկարագրությունը:

Հակառակ երեսի սկզբի տողի առաջին նշանը մասամբ տուժած է, որից հետո ընթերցվում են na, bi, ka, gu, ki: Ուրարտական արձանագրությունների նմանօրինակ տեքստերից հստակ երևում է, որ այստեղ պահպանված -na-bi նշանները, անկասկած, հանդիսանում են nu-na-bi «ներկայացավ» անանցողական բայի (անցյալ կատարյալ ժամանակի եղակի թվի III դեմք) շարունակությունը: Ուրեմն հիշյալ տողի սկզբում վստահորեն կարելի է վերականգնել nu նշանը: Այդ դեպքում քարակոթողի հակառակ երեսի առաջին տողի շարունակության մեջ հեշտությամբ ընթերցվում է ka-gu-ki «իմ առջև»: Այս **kaguki-ն** (տե՛ս նաև մեր արձանագրության 13-րդ տողը) ուրարտական վիճադրերից ամենուրեք հայտնի ka(i)uki-ի հաղվադեպ հանդիպող տարբերակն է: Kaguki-ի մի այլ հիշատակություն հայտնի է սոսկ Սարգուրի II-ի Դավթիբլուրի (ուրարտ. Արգիշտիխինիլի) մի արձանագրությունից²:

Քարակոթողի հակառակ երեսի առաջին տողի տեքստի շարունակությունը, ցավոք, ծայրաստիճան անմխիթար վիճակում է: Այստեղ հստակ երևում է սոսկ սկզբի ուղղահայաց սեպը, որը, դատելով ուրարտական վիճադրության նման տեքստերից, կարելի է համարել ներքևում հիշատակվող էթիուխի երկրամասի արքայի անվան դետերմինատիվը (որոշիչը): Դրանից հետո պահպանված նշանների հետքերը, ըստ երևույթին, վերաբերում են հենց այդ անվանը և LUGÁL «արքա» գաղափարագրին:

Հաջորդ, 2-րդ տողի սկզբում ընթերցվում է KURE-ti-ú-hi, իսկ այնուհետև a նշանի և նման այլ տեքստերի հիման վրա կարծես թե հնարավոր է a-[ru-ni/me me-še?]: Տեքստի 3-րդ տողը սկսվում է KURe-ba-ni-e «երկիր» բառով: Եվ այսպես ստացվում է <n>u-na-bi ka-gu-ki I[.....LUGÁL?] KURE-ti-ú-hi [a-ru-ni me-še?] e-ba-ni-e «Հայտնվեց իմ առջև [..... արքան?] էթիուխի, [վճարեց հարկը] երկրի»: Սիսիանի արձանագրության այս արտահայտությունը, ճիշտ է, իր կրկնակներն ունի ուրարտական վիճադրե-

² См. Н. В. Арутюнян, Новая урартская надпись из Давти-блур, «Вестник древней истории», 1966, № 3, էջ 98, 103:

րում³, սակայն լրիվ չափով չի համընկնում նրանց հետ: Այլ արձանագրությունների հետ չի համընկնում նաև մեր տեքստի շարունակությունը, ուր առկա է a-li-li URUMES⁴ ha-ši-a-li lu(?)-a(?)-u-li(?) e-si⁴:

Այստեղ alili բառը, ըստ երևույթին, հանդիսանում է ali «որպիսի» («ահա») ինչպիսի» հարաբերական դերանվան հոգնակի ձևը, hašial-i-ni (համատ. hašial-me)⁵ haš(ia)- (խուրր. haš-) «լսել» բայի անցյալ կատարյալի հոգնակի III դեմքը: Խոսքը, երևի, էթիոպի երկրի քաղաքների բնակիչների կողմից ուրարտական ռազմական արշավանքի բոթը լսելու մասին է: Alili URUMES⁴ hašial-i արտահայտության տիպի մոտավոր օրինակներ հանդիպում են Խորխորյան տարեգրության կրկնագրի հատվածներից մեկում և Ռուսա II-ի Ադիլջևազի (հայկ. Արծկէ) պակասավոր արձանագրության մեջ⁶: Սիսիանի արձանագրության 4-րդ տողը, ինչպես երևում է վերևում բերված տեքստից, ավարտվում է հայտնի esi «տեղ» բառով:

5-րդ տողում կրկին հիշատակվում է a-li-li բառը, իսկ այնուհետև՝ gu-nu-ši-ni-e «զինվոր, զորք»: Այստեղ, երևի, ակնարկվում է ուրարտական ագրեսիային էթիոպյան զորքի նոդմից հակահարված տալու մասին (alili gunušinle-ի փոխարեն, սակայն, ավելի օրինաչափ կլիներ երկու դեպքում էլ տեսնել alili gunušinili հոգնակի ձևերը. համատ. alili URUMES⁴ և alieli LUGÁLMEŠ⁷ արտահայտությունները վերևում):

Քարակոթողի 6—7 տողերում առկա է a-ri bi-ri [i]š-ti-ni [LU-tú?]-hi-ni za-du-bi: Այստեղ ari biri բառերը առայժմ դժվար է մեկնաբանել, ըստ որում նրանցից առաջինը ընթերցվել է դեռևս Խորխորյան տարեգրության մեջ: Սակայն մեզ թվում է, որ վերջինում ևս առկա է a-ri b[i]-i[i] բառակապակցությունը: Խորխորյան տարեգրության մեջ bi նշանից պահպանվել են սկզբի զուգահեռ հորիզոնական սեպերը, իսկ ri նշանից՝ սկզբի հորիզոնական և նրան հետևող երկու ուղղահայաց սեպերը⁸:

Տեքստի 7-րդ տողում ընթերցվում է za-du-bi 'a-še SALlu-tú ši-ú-bi, որը նախորդ տողի վերջի iš-ti-ni LU-tú-hi-ni արտահայտության հետ միասին նշանակում է «Այստեղ գերություն արեցի (գերիներ վերցրի), տղամարդկանց, կանանց տարա»: Ուրարտական այլ արձանագրությունների նման հատվածներում հանդիպում է ali (տարբերակ՝ inani) LU-tuhi ištini zadubi⁷:

8-րդ տողում առկա է URUMES⁴ GIBIL É.GALMES⁸, որից հետո նկատելի են առանձին նշանների հետքեր: Ելնելով ուրարտական տեքստերի համեմա-

³ Ցե'ս YKH, 158=Handbuch, 104, տողեր 22—23, YKH, 156B1=Handbuch, 102, հակառակ երես, տողեր 28—29, YKH, 36=Handbuch, 23, տողեր 12—13, YKH, 155C, տողեր 36—37=Handbuch, 103, § 4, տողեր 42—43, YKH, 155C, տողեր 36—37=Handbuch, 103, § 15, տողեր 19—20:

⁴ Իերված տեքստի փոխարեն ուրարտական այլ արձանագրություններում հանդիպում են suluštibi šatuali kuriei siluadi makuri, sulustibi... 'aldubi mešini pi և այլն:

⁵ YKH, 128B1=Handbuch, 82, հակառակ երես, տողեր 33—34, YKH, 278=Handbuch, 128, տող 5:

⁶ a-ri b[i]-r[i] ընթերցման փոխարեն Խորխորյան տարեգրության մեջ Գ. Ա. Մելիքիշվիլին առաջարկում է a-ri tab(?)-z[i](?), իսկ Ֆ. Վ. Քյոնիգը՝ a?-ri-b[i]-e? (YKH, 127, III, տող 5, Handbuch, 80, § 5, IV, 5):

⁷ YKH, 155C, տող 11=Handbuch, 103, § 3, տող 17, YKH, 155C, տողեր 41—42=Handbuch, 103, § 4, տողեր 47—48 և այլն:

տությունից, կարելի է ենթադրել, որ այստեղ պակասում է *har-har-šú-bi* բայը: Այդ դեպքում խոսքը վերաբերում է ուրարտացիների կողմից էթիոպյան քաղաքների (բնակատեղիների) հրկիզմանը և ամրոցների ավերմանը:

9-րդ տողի սկզբի տուժած նշանը կարելի է ընթերցել *i (?)* կամ *e (?)*, որից հետո պարզ երևում են *ši, a, ši, e* նշանները: Հետևաբար, *{i(?)}-ši-a-ši-e* կամ *{e(?)}-ši-a-ši-e* բառը (գոյական անունը) հնարավոր է կապել Ձվարթնոցի արձանագրության նույն արմատը ունեցող *e-ši-a-ši-ū-lī* բայի հետ: Այդ տողի շարունակության մեջ առկա են *šú-ga šū-l-ni-ni* բառերը: *Šuga-š* ուրարտական վիմագրերից վաղուց է հայտնի, սակայն մինչ այժմ այն ճանաչված չէ որպես ինքնուրույն բառ, քանի որ սովորաբար համարվել է մի այլ բառի բաղկացուցիչ մասը:

Մեր արձանագրության *šuni-š* «ամբողջը, բոլորը» (հմմտ. խուրր. նույն-իմաստ *šue(ne)*) վկայում է, որ *šuga-š* այստեղ ինքնուրույն բառ է: Ուստի Արմավիրի պակասավոր արձանագրություններից մեկի նախկին *šú-ga-ba-ra-a-ni* և *šú-ga-ba-ri-[-...]* ընթերցումները ևս անհրաժեշտ է ճշտել *šú-ga-ba-ra-a-ni* և *sū-ga-ba-ri-[-...]* ձևով: Ըստ երևույթին, *šuga* բառի արմատը բացառված չէ տեսնել նաև Հադիի արձանագրության *šuguki-ում*⁸ (հմմտ. *šuga > sug-uki* և *kai > ka-uki*, *ini > in-uki*, *ali > al-uki*): Ինչ վերաբերում է ուրարտերեն *šuga-ին*, ապա թերևս այն պետք է նույնացնել խուրրիերեն *šuga-ի*⁹ («միասին») հետ (*šug-uki* «ինձ հետ»(?)):

10-րդ տողում առկա է *gu-nu-še ma-a-nu* «մարտ եղավ» հայտնի արտահայտությունը, իսկ այնուհետև՝ *ma-ri-n[?]*¹⁰ *KURŠu¹¹-lu-qu-ú-e [e]-di-ni URU¹²-du-a-ka-a-i nu-na-bi ka-gu-ki 1Za-zı(?) -nu bu-ra aš-tú-bi me-še e-di-a te-ru-bi* (10—14 տողեր):

Բերված արտահայտության *marinī* բառը մասնագիտական գրականություն մեջ համադրվում է խուրրիերեն *mari-anne-ի* հետ և մեկնաբանվում որպես «ազնվական»: Այդ դեպքում այստեղ խոսքը վերաբերում է, հավանաբար, Ծուլուկու երկրի ազնվականության՝ նվաստացուցիչ ձևով ուրարտական թագավոր Արգիշտի II-ին ներկայանալուն: Դա բավական նման է Մանայի արքա Ուլուսունուի և Խուբուշկիայի արքա Յանզուի հանդիպմանը ասորեստանյան թագավոր Սարգոն II-ի հետ մ. թ. ա. 714 թ.¹²: Տեքստի համաձայն, Իրդուա քաղաքի մոտ Արգիշտիին ներկայանում է նաև Ծուլուկուի արքան՝ Զադինուն (?), որը հպատակեցվում է (տառացիորեն՝ «ստրկացվում» է) և «այնտեղ հարկ է նշանակվում» (*meše edia terubi*): Խոսքը, ըստ երևույթին, Ծուլուկու երկրի ամենամյա հարկ վճարելու պարտավորության մասին է:

⁸ УКН, 276=Handbuch, 124, երեսի կողմ, տողեր 26—27.

⁹ E. A. Speiser, Introduction to Hurrian, New Haven, 1941, էջ 91.

¹⁰ И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963 (այսուհետև՝ УПД), էջ 89; I. M. Diakonoff, Hurrisch und urartäisch, München, 1971 (այսուհետև՝ HU), էջ 76, 166.

¹¹ Այս նշանը Հ. Հ. Կարապետյանը նախապես ընկալել է տրոհված ձևով և հակված է եղել ընթերցելու *sal-ma* (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1978, № 10, էջ 62, ծան. 86): Սակայն նախ՝ *sal-ma* կոմպլեքսը երբեք *šu* չի կարող տալ (դրա համար անհրաժեշտ է գոնե *sal-ás*) և ապա՝ երևում է, որ հեղինակը ժամանակին ծանոթ չի եղել արձանագրության հենց հայտնաբերման օրվանից մեր առջարկած *šu* ընթերցմանը: Տե՛ս «Սովետական Հայաստան» (օգոստոսի 20, 1975) և «Коммунист» (օգոստոսի 24, 1975) օրաթերթերը:

¹² Fr. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sargon, Paris, 1912, էջ 8—9, տողեր 32—36. էջ 46—49, տողեր 306—308.

Տեքստում, այնուհետև, ղետեղված է արքայական տիտղոսաշարը՝
DHal-di-ni-ni al-su-i-ši-ni iš-te-di IAr-giš-ti-ni IRu-sa-a-ḫi LUGÁL
DAN.NU LUGÁL KURBi-a-na-a-ú-e a-lu-si URUTu-uš-pa-a UR[U] (14—18
տողեր) «Խալդի աստծու մեծությունը ištedi Արգիշտին, Ռուսայի որդին,
թագավոր (է) հզոր, թաղավոր՝ Բիայնիլի, կառավարիչը սուշպա քաղաքի»:

Տեքստի ištedi բառը ցույց է տալիս, որ նրան նախկինում վերագրված
ո՛չ բայական իմաստը, ո՛չ էլ «շտապ, շուտափույթ»¹³ թարգմանությունը
իրենց չեն արդարացնում: Մեր ištedi-ն (տարբերակներ՝ ištidi, istiedi),
հավանաբար, պետք է համարել ištini «այստեղ» բառի ուղևորական հոլո-
վածակը¹⁴ (հմմտ. ištini-ni բացառական հոլովածակը): Այդ դեպքում խոսքը
«այստեղ» (այս կողմերում՝ Մուլուկու երկրում) ուրարտական թագավորի հզո-
րության (LUGÁL DAN.NU), նրա սխրագործությունների մասին է:

19—20-րդ տողերում հանդիպում է DHal-di-ni-ni ba-ú-ši-ni IAr-giš-
ti-se a-li «Խալդյան հրամանով Արգիշտին ասում է» հայտնի բանաձևը,
իսկ շարունակության մեջ, նշանների պահպանված հետքերի հիման վրա,
կարծես թե հնարավոր է ընթերցել i(?)—si—n[i?]: 21-րդ տողում առկա է
անհասկանալի սրտահայտություն DUTU-ni-ni ni-ir-ḫi si-bi-[...]¹⁵: Տեքստի
շարունակության մեջ, 22—23-րդ տողերում, ընթերցվում է a-ša-di i-ni
ḫa-a-ri-[ni?] URUA-mu-ša-di:

Այստեղ ուշադրության արժանի է անցյալ կատարյալ ժամանակի եզակի
թվի I դեմքի ašadi անանցողական (չեզոք) բայը, որն այդ ձևով ուրար-
տական վիմագրության մեջ հանդիպում է առաջին անգամ: Սակայն մեզ
թվում է, որ այս aš(a)-ն և անցողական (ներգործական) բայ aš(u)-ն կաղմ-
ված են նույն արմատից: Միևնույն արմատից կաղմված անցողական և
անանցողական բայերը, ինչպես հայտնի է, լայն տարածում ունեն ուրար-
տերենում (հմմտ. ušt(u)- և ušt(a)-, ši(u)- և ši(a)-, ul(u)- և ul(a)- և այլն):
Այդ դեպքում aš(a)- անանցողական բային, ըստ երևույթին, կարելի է տալ
«գնալ, ընթանալ, հետևել»¹⁶ իմաստը: Հետևաբար, ašadi ini ḫari[ni] URUAmu-
šadi նախադասությունը կարելի է թարգմանել «Ընթացա այս ճամփով դեպի
Ամուշա քաղաքը»:

Տեքստի 23-րդ տողի վերջում առկա է 'a-ši [...], իսկ 24-րդ տողում՝
SALlu-tū-ni-e KURBi-[...]: Ըստ ամենայնի երևում է, որ խոսքը
գնում է նվաճված երկրից տղամարդկանց և կանանց գերեվարության մասին
դեպի Բիայնիլի: Այդ դեպքում արձանագրության վերոհիշյալ հատվածը, հավա-
նաբար, պետք է ընկալել հետևյալ ձևով. 'a-še₂₀¹⁷ [pa-ru-bi?]¹⁸ SALlu-tū-ni-e
KURBi-[a-i-na-di]:

¹³ Տե՛ս Գ. Ա. Меликишвили, УКН, էջ 399, F. W. König, Handbuch, II, էջ 122:

¹⁴ Հմմտ. F. W. König, Handbuch, II, էջ 122, ծան. 5:

¹⁵ Գուցե ni-ir-ḫi-si-bi-[...]:

¹⁶ Հմմտ. Գ. Ա. Меликишвили, УКН, էջ 391, И. М. Дьяконов, УПД, էջ 74,
87, I. M. Diakonoff, HU, էջ 76:

¹⁷ Այդ բառը ուրարտերենում սովորաբար հանդես է գալիս 'a-še ձևով, ուստի si նշանը
նպատակահարմար ենք գտնում տառադարձել se₂₀:

¹⁸ Այս հատվածում parubi բայը իր տեղում չէ. այն պետք է լիներ կա՛մ SALlutunie-ից
հետո, կա՛մ էլ՝ նախադասության վերջում: Սակայն բարակոթողը այդպիսի վերականգնման
հնարավորություն չի ընձեռում: Շարահյուսական նման անհաջող օրինակներ երբեմն հանդի-
շ Հանդես, № 3

Քարակոթողի վերջնամասը թեթությամբ ջարդված է և տեքստը կորստի մատնված: Նրա 25—26-րդ տողերի պահպանված հատվածներում ընթերցվում է *!Ar-giš-ti-še <.....>-lu-še ti-ni-ni <.....>*: Կասկածի ենթակա չէ, որ առկա է արձանագրության եզրափակիչ մասը՝ անեծքի բանաձևը: Այդ պատ-



Երեսի կողմ



Հակառակ կողմ

ճառով էլ բերված տեքստը, վերականգնումից հետո, կարելի է տառադարձել և թարգմանել հետևյալ ձևով՝ *!Ar-giš-ti-še <a-li-e a>-lu-še ti-ni-ni <u-li-e>* «Արգիշտին ասում է՝ Ով անունը ոչնչացնի»: Խոսքը սեպագիր տեքստում թագավորի անունը ոչնչացնելու (ջարդելու, փշրելու, ջնջելու) մասին է:

Պահպանված վերջին, 27-րդ տողի միջին մասում առկա են երկու կողք-կողքի ուղղահայաց, իսկ այնուհետև՝ մեկը մյուսին հաջորդող երկու հորիզոնական և մեկ ուղղահայաց սեպեր: Անեծքի բանաձևերի տեքստերի հիման վրա նրանցից առաջինը կարելի է դիտել *ma-si* «իր» բառի *si* նշանի երկրորդ կեսը, իսկ հաջորդը՝ *ti-ni* «անուն» բառի *ti* նշանը (այս դեպքում բացակայում է սոսկ վերջին «անկյունաձև» սեպը):

սյում են նաև ուրարտական այլ տեքստերում: Այդ մասին մանրամասն տե՛ս N. V. Aroutiou nian, Problèmes concernant la dernière période de l'histoire d'Urartu, „Acta Antiqua Academiae Scientiarum Hungaricae“, Budapest, 1974, T. XXII, Fasc. 1—4, էջ 423—424: Մյուս կողմից, *parubi*-ի փոխարեն հնարավոր են նաև *šiubi* կամ *agubi* վերականգնումները:

Պահպանված հատվածը ցույց է տալիս, որ Սիսիանի արձանագրության անեծքի բանաձևը լրիվ չափով չի համընկնում ուրարտական այլ արձանագրությունների համապատասխան տեքստերի կրկնակներին: Նրանում բացակայում է սկզբի մասը: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ քարակոթողի վրա, ըստ երևույթին, բավարար տեղ չի եղել անեծքի բանաձևի լրիվ տեքստը փորագրելու համար:

Ուրարտական վիմագրական նյութը բավականաչափ հստակ վկայում է, որ Արգիշտի II-ի Սիսիանի արձանագրության անեծքի բանաձևն ընդհանուր առմամբ համընկնում է Ռուսա II-ի Զվարթնոցի արձանագրության համապատասխան բանաձևի շարունակությանը¹⁹: Դա նշանակում է, որ Ռուսա II-ը հետագայում լրիվ չափով ընդօրինակել է իր հոր՝ Արգիշտի II-ի արձանագրության անեծքի բանաձևը, ընդ որում, այլ արձանագրությունների հիման վրա, ավելացնելով միօրինակ սկիզբը:

Ստորև բերում ենք Սիսիանի ուրարտական նոր արձանագրության սեպագիր տեքստի ընթերցումը և թարգմանությունը.

Դիտական տառադարձում

Երեսի կողմ

- (1) [D]Hal-di-e] [e-[ú-ri]-[i-e]
- (2) [i-ni pu-lu-si ¹Ar-giš-ti-še]
- (3) [I]R[u-sa-ḫi-ni-še ku-g]u-[ú-ni]
- (4) ul-[gu-š]i-[ia-ni-e-di]-ni
- (5) [ma-ni-ni D]Hal-[di-ni bi-di]
- (6) [¹Ar-giš-ti-i-e]
- (7) [¹Ru-sa-a-ḫi-ni-i-e]
- (8) [a-ru]-ú-še [e-ku-ri(?)-še]
- (9) [iṣ-pu-i-še ul-gu-ú-še]
- (10) [pi-ṣu-ú-še al-su-še]
- (11) [e-ia] ar-[di-i-še]
- (12) [ar-a-ni uš-ma-a-še]²⁰
- (13) [D]Hal-di-ni-ni al]-su-ši-[ni]
-
- (?) < . . . l > UDME-ni āš-<gu-bi>
-

Հակառակ կողմ

- (1) <n>u-na-bi ka-gu-ki l[. LUGÁL?]
- (2) KURE-ti-ú-ḫi [a-ru-ni/me me-še?]
- (3) KURE-ba-ni-e a-li-li URU[MEŠ]

¹⁹ Հմմտ. ՄԿԽ, 281=Handbuch, 126, տողեր 31—47: Սիսիանի արձանագրության անեծքի բանաձևում, Զվարթնոցի արձանագրության համեմատությամբ, բացակայում է հետևյալ հատվածը՝ aluse ini DUB-te tulie aluše pitulie aluše esini sulduh aluše KİTIM mepulie aluše AMES hušulie aluše uliše tiulie leše zadubi:

²⁰ Այս տեքստի մաղթանքի բանաձևի 5—12-րդ տողերի վերականգնման մասին տե՛ս Н. В. Арутюнян, К интерпретации урартской надписи из Хаги, «Древний Восток—3», Ереван, 1978, էջ 153—158, 270—271:

- (4) ḥa-ši-a-li lu(?)·a(?)·u-li(?) e-si
- (5) a-li-li gu-nu-ši-ni-e
- (6) a-ri bi-ri [i]š-ti-ni [LÚ-tú?)-ḥi-ni
- (7) za-du-bi 'a-še SALlu-tú ši-ú-bi
- (8) URUMEŠ GIB[L É.GALMEŠ [ḥar-ḥar-šú-bi?]
- (9) i(?)·ši-a-ši-e šú-ga šú-i-ni-ni
- (10) gu-nu-še ma-a-nu ma-ri-n[i?]
- (11) KURŠu-lu-qu-ú-e [e?]-di-ni
- (12) URUIr-du-a-ka-a-i nu-na-bi
- (13) ka-gu-ki 'Za-zi(?)·nu bu-ra áš-tú-bi
- (14) me-še e-di-a te-ru-bi DḤal-di-ni-ni
- (15) al-su-i-ši-ni iš-te-di
- (16) 'Ar-giš-ti-ni 'Ru-sa-a-ḥi
- (17) LUGÁL DAN.NU LUGÁL KURBi-a-na-a-ú-e
- (18) a-lu-si URUTu-uš-pa-a UR[U]
- (19) DḤal-di-ni-ni ba-ú-ši-ni
- (20) 'Ar-giš-ti-še a-li i(?)·si-n[i?]
- (21) DUTU-ni-ni ni-ir-ḥi si-bi-[...]
- (22) a-šá-dí i-ni ḥa-a-ri-[ni?]
- (23) URUA-mu-šá-dí 'a-še₂₀ [pa-ru-bi?]
- (24) SALlu-tú-ni-e KURBi-[a-i-na-dí]
- (25) 'Ar-giš-ti-še <a-li-e>
- (26) <a>-lu-še ti-ni-ni <tú-li-e>
- (27) <ma-s>i t<i-ni te-li-i e-a-i>
- (28) <KURbi-a-i-ni-še e-a-i>
- (29) <KURlu-lu-i-ni-še DḤal-di-še>
- (30) <DIM-še DUTU-ni-še DINGIRMEŠ -še>
- (31) <me-i ti-i-ni me-i>
- (32) <ar-mu-zi-i me-i>
- (33) <zi-il-bi-i qí-ú-ra-i-dí>
- (34) <ku-li-e-tú-ú-ni>

Թարգմանություն

Երեսի կողմ

(1) *հալդի աստծուն, տիրոջը, (2) այս արձանագրված քարակոթողը Ար-գիշտին, (3) Ռուսայի որդին, կանգնեցրեց (4) հանուն կյանքի: (5) Թող լինի հալդի աստծու կողմից (6) Արգիշտին, (7) Ռուսայի որդուն, (8) բարօրութուն (°), ekuřiše(?), (9) երջանկություն, կյանք, (10) ուրախություն, մեծություն, (11) ինչպես նաև իշխանություն, (12) ուժ (ու) կորով: (13) հալդի աստծու մեծությունը... (?) մեկ օրում բռնագրավեցի...*

Հակառակ կողմ

(1) *Ներկայացավ իմ առջև [.....արքան] (2) էթիուսիի, [վճարեց հարկը] (3) Երկրի: Alili քաղաքները (4) լսեցին... տեղը, (5) alili զորքը (6) արի*

biri այստեղ գերիններ (7) արեցի²¹, տղամարդկանց, կանանց տարա: (8) Քաղաքները հրկիղեցի, ամրոցները ավերեցի: (9) išlašie(?) բոլորը միասին: (10) Ճակատամարտ եղավ: Ավագանին (11) Մուլուկու երկրի այնտեղից^(*) (12) Իրդուա քաղաքի առջև ներկայացավ (13) իմ առջև²². Ձագինու^(*) (արքային) ստրկացրի: (14) Հարկ այնտեղ նշանակեցի:

Խալդի աստծու (15) մեծությամբ այստեղ^(*) (16) Արգիշտին, Ռուսայի որդին, (17) թագավոր է հզոր, թագավոր՝ Բիայնիլիի, (18) կառավարիչը Տուշպա քաղաքի:

(19) Խալդի աստծու հրամանով (20) Արգիշտին ասում է՝ isini(?) (21) DUTU-nini nirihi sibi[...]: (22) Ընթացա այս ճամփով (23) դեպի Ամուշա քաղաքը: Տղամարդկանց, (24) կանանց տարա Բիայնիլի:

(25) Արգիշտին ասում է՝ (26) Ով (իմ) անունը ոչնչացնի, (27) իր անունը դնի, լինի (նա) (28) Բիայնիլցի, լինի (29) թշնամի, թո՛ղ Խալդին, (30) Թեյշեբան, Շիվինին, (այլ) աստվածները, (31) ո՛չ անունը, ո՛չ (32) ընտանիքը, ո՛չ (33) սերունդը գետնի վրա (34) չթողնեն:

* * *

Մի քանի խոսք հրատարակվող նոր արձանագրության պատմագիտական նշանակության մասին:

Սիսիանի արձանագրությունը լուսաբանում է Ուրարտուի անկման շրջանի ռազմա-քաղաքական պատմությունը, որի վերաբերյալ, ինչպես հայտնի է, նյութերը վերին աստիճանի սուղ են: Այնուհետև, հենց Արգիշտի II-ին պատկանող արձանագրությունների մեջ էլ նոր սեպագիրը միանգամայն ուրույն տեղ է գրավում, քանի որ այդ թագավորի ռազմա-քաղաքական բնույթի ընդամենը երկու համանման սեպագիր տեքստեր առայժմ հայտնի են սոսկ Սարբի շրջանից (Կասպից ծովը տանող ճանապարհի վրա)²³:

Հետևաբար, Սիսիանի սեպագիրը ընդլայնում է Ուրարտուի ռազմական նվաճումների, նրա ազդեցության ոլորտների մասին մեր ունեցած պատկերացումները, հարստացնում հինարևելյան այդ պետության տեղագրության հարցերը և աշխարհագրական քարտեզը:

Վերոհիշյալ տեսակետից հսկայական հետաքրքրություն են ներկայացնում Սիսիանի արձանագրության մեջ հիշատակված էթիուխի (KUREtiuhi) և Մուլուկու (KUʔŠuluqu) երկրները, Իրդուա (URUIrdua) և Ամուշա (URUAmuša) քաղաքները (բնակատեղիները):

Հատկանշական է, որ էթիուխին (տարբերակ՝ էթիունի) ուրարտական գրավոր աղբյուրներում հանդես է գալիս մերթ Կատարդա (հին վրաց. Կլարջեթի, հին հայկ. Կղարջք), Ուիտերուխի, Լուշա երկրների ու Անաշե (հայկ. Ալաշ-կերտ) քաղաքի, մերթ՝ Աշտուխինի ցեղի ու Ախուրիանի քաղաքի, մերթ՝ Ուլուանի երկրի ու Դարանի քաղաքի, մերթ էլ՝ Կի(ե)սունի քաղաք-պետության, էրիախի (պատմական Շիրակ) մարզի և, վերջապես, Ուդուրի-էթիունի ցեղային միության կապակցությամբ: Ինչ վերաբերում է Սիսիանի արձա-

²¹ LU-tuḫini zadubi տառացիորեն նշանակում է «գերություն (գերում) արեցի», որը պետք է հասկանալ «գերիններ վերցրի»:

²² Այս նախադասությունը ըստ էության պետք է ընկալել «Իրդուա քաղաքի մոտ ներկայացավ ինձ Մուլուկու երկրի ավագանին»:

²³ „Journal of Cuneiform Studies“, XIX, № 2, 1965., էջ 34—40=YKH, 445, 446:

նագրությանը, ապա նրանում էթիուխին արդեն հանդես է դալիս մի բոլորովին նոր երկրի՝ Ծուլուկուի (Իրդուա և Ամուշա քաղաքներով) առնչությամբ:

Այսպիսով, ուրարտական վիմագիր հուշարձանների էթիուխին, VII դարի հայկական աշխարհագրության «աշխարհ»-ների նման, կարծես թե հանդիսացել է ընդհանուր աշխարհագրական հասկացություն, որի մեջ մտել են մի ամբողջ շարք գավառներ՝ սկսած Սարիղամիշի շրջանից արևմուտքում մինչև Սևանի ավազանին հարող տարածքները արևելքում, իսկ այնուհետև դեպի հարավ և հարավ-արևելք՝ մինչև Կոտայքի և Սիսիանի շրջանները:

Ի դեպ, հետաքրքիր է և ուշագրության արժանի այն, որ ուրարտական դարաշրջանի (մ. թ. ա. VIII դարի վերջի կամ VII դարի սկզբի) Ծուլուկու տեղանունը համարյա առանց փոփոխության պահպանվել է համեմատյալ դեպս ընդհուպ մինչև մեր թվագրության VII դարը: «Աշխարհացույցի» նույնանման Ծղուկ մարզը՝ համանուն գետով, եղել է Մեծ Հայքի իններորդ աշխարհի՝ Սյունիքի տասներկու գավառներից մեկը²⁴: Այն համապատասխանել է հենց Սիսիանի շրջանին, ուր և հայտնաբերվել է նոր սեպագիրը՝ Ծուլուկու երկրի հիշատակմամբ:

Շատ հավանական է, որ տեղաբնիկները՝ վաղ հայկական ցեղերը, դեռևս ուրարտական նվաճման ժամանակներում էլ իրենց երկիրը «Ծղուկ» հորջորջած լինեն, սակայն ուրարտերեն վանկային սեպագիրը կարող էր այն արտահայտել միայն ՏԱ-ԼԱ-ՂԱ (Ծու-ղու-կու) ձևով:

Մյուս կողմից, հատկանշական է, որ էթիունի երկիրը և Իրդուա²⁵ քաղաքը (Ծուլուկու երկրի բնակատեղին) միասին հիշատակվում են նաև ուրարտուի պատմության ավելի վաղ ժամանակաշրջանին վերաբերող Սարգուրյան տարեգրությունում: Այդ փաստը ակնառու վկայում է այն մասին, որ Ծուլուկու երկրում ուրարտացիները եղել են դեռևս Սարգուրի II-ի թագավորության օրոք (մ. թ. ա. 764—735 թթ.): Վերջինս, ինչպես հայտնի է, եղել է Սիսիանի արձանագրության կազմողի՝ Արգիշտի II-ի պապը:

Շատ հավանական է, որ Իրդուան²⁶ եղել է Ծուլուկու գավառի կենտրոնը: Այդ տեսակետից ուշագրավ փաստ է, որ Սարգուրյան տարեգրության տվյալների համաձայն Իրդուան ամրացված արքայական քաղաք է (URU Irduani URU LUGAL-nusi agununi manu), իսկ Սիսիանի արձանագրության մեջ, ի տարբերություն Ամուշա քաղաքի, նա անմիջականորեն առնչվում է Ծուլուկու երկրի արքայի՝ Զազինուի երեւալու և ստրկացվելու հետ:

²⁴ Հին հայկական Ծղուկի մասին տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 350: Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 109—110: Ի դեպ Ծղուկը բազմիցս հիշատակվում է նաև ուշ ժամանակներում՝ մեր թվականության XIII դարի վերջին—XIV դարի սկզբին: Տե՛ս Ստեփանյան Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 12, 34, 35, 41, 158, 229, 325, 509, 535:

²⁵ Ուրարտական ժամանակվա Ծուլուկու երկրի Իրդուա քաղաքի (բնակատեղիի) անունը համեմատի՛ր վաղ հայկական Ծղուկ գավառի Արիտ և Արթեք, իսկ Ամուշան՝ Մուցք գյուղանունների հետ: Տե՛ս Ստեփանյան Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 216, 229, 322, 323, 325, 484, 509, 510:

²⁶ Խորխորյան տարեգրության համանուն Իրդուան՝ Ուրուրդա երկրի քաղաքը, կապ չունի Սարգուրյան տարեգրության և Սիսիանի արձանագրության Իրդուայի՝ Ծուլուկու երկրի քաղաքի հետ:

Սիսիանի արձանագրութիւնը միաժամանակ հնարավորութիւն է ընձեռում պարզելու, որ Սարգուրյան տարեգրութեան Ուեիրդաինին ոչ թէ ցեղանուն է, հնչուես մինչև այժմ պնդվել է մասնագիտական գրականութեան մեջ, այլ անձնանուն (թագավորի անուն), որին պատկանել է արքայանիստ քաղաք Իրդուան (այսինքն՝ Ծուլուկու երկրի կենտրոնը)։ Այդ նույն ձևով Սարգուրյան տարեգրութեան մեջ անձնանուններ պետք է դիտել (նախկին ցեղանունների փոխարեն) նաև Ուեիրդաինիի հետ հիշատակվող Աբիանին (որի արքայանիստ քաղաքն էր Էդիան) և Իրկուաինին (որի արքայանիստ քաղաքն էր Բրույան)²⁷։ Իրկուաինին էլ, իր հերթին, կապ չունի Իրեկուախի-Էրիկուախի երկրանվան (ցեղանվան) հետ։

Ինչ վերաբերում է Ուրարտուի քաղաքական և տնտեսական վիճակին, ապա հայտնի է, որ հինարեւելյան այդ պետութիւնը Սիսիանի նոր արձանագրութեան կազմողի՝ Արգիշտի II-ի օրոք ծայրաստիճան անբարւոյթ կացութեան մեջ էր։ Դրանք ասորեստանյան թագավոր Սարգոն II-ի մ. թ. ա. 714 թ. Ուրարտուի դեմ ձեռնարկած արշավանքին հաջորդող ծանր տարիներն էին։ Հիշենք, որ ասորեստանցիներն իրենց ճանապարհին հիմնովին տվել էին Ուրարտուի երկրագործական, այգեգործական-խաղողագործական և սնանկապահական (առանձնապես ձիաբուծական) կենտրոնները՝ մերձուրմէյան տարածքում և այլուր։

Դա ոչ միայն Ռուսա I-ի թագավորութեան մայրսմուտն էր (զրանից հետո նա հազիվ մեկ տարի է մնում գահի վրա), այլև Ուրարտուի ըստ ամենայնի անկման սկիզբը։ Ասորեստանի երբեմնի ամենուրեք տարածվող Առաջավոր Ասիայում մղվում է երկրորդական պետութեան շարքը։ Նրա նոր թագավորը՝ Արգիշտի II-ը ստիպված էր ուղիներ ուղծել Ուրարտուի անկախութիւնը մի կերպ պահպանելու և քայքայված տնտեսութիւնը վերականգնելու համար։

Ահա այդպիսի քաղաքական և տնտեսական նկրտումների արգասիք պետք է համարել Արգիշտի II-ի հեռավոր ռազմական արշավանքները դեպի Կասպից ծովի արևմտյան ափերը²⁸ և Սիսիանի շրջանը։ Միանգամայն բնական է, որ հարավում և այլուր²⁹ կորսված մարդերի դիմաց Ուրարտուն որոշ փոխհատուցում էր որոնում արևելքում և հյուսիս-արևելքում։

НОВОНАЙДЕННАЯ КЛИНОПИСЬ АРГИШТИ II

Доктор историч. наук Н. В. АРУТЮНЯН

(Резюме)

Урартская надпись, обнаруженная в Сисианском районе АрмССР, освещает все еще недостаточно изученную военно-политическую историю Урарту в период его упадка. Она расширяет наши представления о границах влияния этого древневосточного государства в конце VIII—начале VII вв. до н. э., содержит ряд новых данных по урартской топо- нимике.

²⁷ Տե՛ս ՄՀԽ, 155A=Handbuch, 103, § 16, տողեր 14—16։

²⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս Н. В. Арутюнян, Блайнили (Урарту), Ереван, 1970, էջ 318—321։

²⁹ Ռուսա I-ի թագավորութեան հետ ունեցած հայտնի չէ ուրարտացիների առկայութեան մասին նաև Սեանի ավազանում։

Публикуемая надпись повествует о завоевании области Цулуку с ее городами (поселениями) Ирдуа и Амуша. Примечательно, что топоним Цулуку урартского времени почти без изменений сохранился вплоть до VII в. н. э. Идентичная область Цгук (Tsłuk) с одноименной рекой по «Ашхарацуйцу» была одним из двенадцати «гаваров» Сюника, девятого «ашхара» великой Армении. Цгук—древнеармянское название современного Сисианского района АрмССР, откуда и происходит новая урартская надпись с упоминанием страны Цулуку. Вполне вероятно, что абorigены (раннеармянские племена) свою область называли Цлуком еще при урартской экспансии, однако в слоговом урартском письме это название могло передаваться лишь в форме Şu-lu-qu (Tsu-lu-qu).

Что касается Ирдуа, центра области Цулуку, то он упоминается также в более ранний период истории Урарту—в Сардуровской летописи. Этот факт наглядно свидетельствует о том, что в Сисианский район урарты впервые проникли еще при правлении Сардури II (764—735 гг. до н. э.)—деда Аргишти II. Надпись содержит также другие новые факты исторического и языкового характера, позволяющие внести ряд уточнений в корпус урартских надписей.

Снаряжение дальнего военного похода в Сисианский район показывает, что после потери государством Урарту обширных территорий Аргишти II искал хотя бы частичной компенсации на северо-востоке.